

սկիզբը, նրանք կարող են խիստ օգտակար լինել երեխաներին:

### ԺԳ.

Պ. Ն. Տէր—Աւետիգանցի ուշքը դարձնում ենք (ինչպէս Պ. Ս. Պ. էլ նկատում է իւր յօդուածում) իւր աշխատութեան մէկ խոշոր պահանջութեան վերայ: Մայրենի Անգլու լի է բազմաթիւ (երեխ տագորական) սխալներով, սկզբից մինչև վերջը քիչ քիչ, ինն հարիւրից (900) աւելի տառերի, կէտադրութեան և առողանութեան նշանների սխալներ կան, որ ո՛րքան վատ հետեանքների պատճառ է հազարաւոր երեխաների ձեռքում: Ի՞նչ է ինքը պարտքը վերջում մի քանի սխալները ցոյց տալով՝ խնդրում է Պ. Պ. ուսուցիչներին միւս մանր սխալները (մանր սխալներ) ուղղել: Բայց միթէ կարելի է այնքան սրտաւրէն ուղղել քանի՞ մէկը: Մնում է միայն երկրորդ տպագրութեան ժամանակ մեծ խնամքով մաքրել այդ բոլոր մանր, բայց մանուկների համար մեծամեծ դայթակղութեան քարերը:

(ՍՆՅԵՆ Է ԵՄԻՄԵՆ):

### ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ:

Արթնայ:—Երիտեան:—Արթն, եւ Բագ. Ժողովներ:—Ա.Ե.Լ. Հայրապետի Կոնգրէս:—Աղապեան փաթեարան:—Հակոբաւաններ:—Բողոքական:—Գաւառներէն:—Ազգ. Լրագիրք:—Ս. Երուսաղէմի հին խոյր:

Կիւլմամ կատարել . . . Խմբագրութեանդ առաջարկութիւնը տեղւոյս ազգային անցից վերայ հակիրճ տեղեկութիւններ տալու:

\*\*\*

Աւրախ եմ, որ Հայազգի եղբայրք մեր հետզհետէ արժնաւոր վերայ են, և այսուհետեւ չեմ կարծեր որ ամեն մարդու դերերուն դիւրաւ հաւատան թէ և այս ալ երբեմն լաւ հետեանք չունենար, բայց Ս. Խրիմեան պատրիարքի շնորհիւ ինչպէս շատ միասնեւ տեսանք, նոյնպէս այս ախտը ևս տարածուեցաւ:

Տա՛ր Աստուած, որ ապագային մէջ աւելի չբլաւթարանար:

\*\*\*

Մի մեծ շարժում կայ ամեն տեղ Խրիմեանը հրաժարեցնելու համար, որ արդարեւ հակառակ ազգային շահուց և օգտի՝ խիստ վտանգաւոր մի դրութեան հետեւեցաւ, և տուած հարուածը շատ տարիներէ զինի կրտսին եթէ այլ ևս յաւելուածք չբարդուին:

Այսու ամենայնիւ կայ մի կուսակցութիւն՝ որ երկնչելով թէ մի գուցէ անձրեւէ փախչին և կար-

կուտի բռնուին Էջմիածին: Խորամանկութեանց և անձնասիրութեանց իշխորհաւ, ուստի կաղաչեն խրիմեան և կհրաւիրեն յուղղութիւն և ի պաշտպանութիւն ազգային շահուց և ի ճիշտ գործադրութիւն Սահմանադրութեան:

\*\*\*

Այժմ ունեցանք օրինաւոր Արթն. և Բագ. Ժողովներ: Գոհ եմք սոցա բռնած խոհեմ ընթացքէն որ միմիայն յօգուտ Ազգի կնկրտին գործել: Սոցա բռնած ընթացքը արդարեւ գործնական է և առայժմ մեծ ետանդեամբ կարգի կրնն ազգ. գործերը:

Ի՞նչ է Գ.Խր. Խրիմեան Էջմիածին: ձեռք գործիք եղած՝ երբեմն ինքնին՝ առանց սոցա գիտութեան՝ միապետական դրութիւն և հակասահմանադրական ընթացքներ կրնէ և քմահաճոյ հրամաններ կարծակէ, բայց շնորհակալ եմք մեծապէս որ նոքա ներողամիտ կրնին և կրճանան համաձայնութիւն ընել և խոտովութեանց տառքը առնուլ:

Մաղթեմք՝ որ ըստ այսմ՝ յարատեւեն:

\*\*\*

Ժողովուրդը մեծ ուշադրութեամբ և անհամբեր ոգով կրդիտէ՝ Լեռնանք թէ Երեսի. Ժողովը ինչ պիտի որոշէ և ո՞րք պիտի ընտրէ ամենայն Հայոց Ա.Ե.Հ. Հայրապետի պահանջած երկու անձինքը փութով ի Ս. Էջմիածին ուղղելու: Ս. Խրիմեան կըմայ-ինքն գալ, բայց չեմ կարծեր որ յաջողի:

\*\*\*

Չեղ և կողմանցի համար կարեորութիւն չըպիտի ունենայ Ազգական Օրիորդաց Աւարժարտի ցաւալի և դժբաղդ խնդիրը:—որ նախատինք կըրերէ Ազգիս, — փասն որոյ կընեմ նորա մասին:

\*\*\*

Հակահասունեան և Հասունեան Հոգովմէական ազգայնոց խնդիրը բաւական պարզեցաւ:

Գեր. Հասունեան գրեթէ արքայիցաւ ի իւր ուղով, յորմէ բանագրանաց շանթեր արձակել կապառնայ, բայց ոչինչ աղիւնք պիտի ունենայ:

Արդէն Հակահասունեանք ընտրեցին իւրեանց Ազգապետը կամ պատրիարքը որն որ Բ. Դոան հրովարտական հաստատուեցաւ պաշտօնին մէջ:

Ի՞նչ է Հակառակութիւնքը կը շարունակեն երկու կուսակցութեանց մէջ, և երբեմն ցաւալի հետեանքներ կ'ծնին, բայց սա անտարակուսակն է որ երբ և իդէ Հակահասունեանք խապաւ կ'յաղթեն Հասունեանց:

Թո՛ղ ժամանակը ապացուցանէ:

\*\*\*

Բողոքականք շատ տեղեր տակաւ առ տակաւ կնուագին, և նոյն իսկ իւրեանց մէջ մի անհաւանք հակակրութիւն կը տածուին ընդդէմ քա-



բողջաց իւրեանց, թէեւ մի քանի տեղեր ևս նոր ձիւղեր կ'ըլին:

Սա սոցյոգ է, որ սոցյա հիմքը աւազի վերայ է, և եթէ եկեղեցական դասքը խոհեմ ընթացք բռնէ, երկար չտեւեր՝ ամեն տեղ բողբոջականութիւնը բոլորովին կանչեալանայ, և ի՞նչ կարծէք, աւելի՞ կտեւէ. հալածմունքն էր՝ որ բողբոջականութիւնը քաղցրացոյց և տարածեց. բայց ասոնց կրօնական կեղծութասիր բարոյութիւնք և ընթացքներ շատ շուտ կզգուեցնեն իւրեանց ժողովուրդը, որ յոյժ սակաւամիտ են, որք կամ իսպառ կանչեալանան օտար ազգութեան մէջ՝ կրօնի պարտուակաւ կամ շուտով կզգաստանան և կմիանան իւրեանց ազգութեան մեծ մարմնոյ հետ:

\*\*\*

Դաւառներէն ամեն օր և ամեն ժամ ցաւալի բուրբեր կհրատարակուին աստ:

Բաւական չէ եղած ժողովուրդեան մի քանի տեղ օտարներէն կրած հարստահարութիւնները և զորկանքը, Խրիմեանի օգուտը կպահանջէ եղբւր ամեն կողմ լրտեսներ ունենալ և ժողովուրդը երկպառակութեանց հրաւիրել և եղբարք եղբօր հետ կուռեցնել՝ միմեանց հետ անհաշտ թշնամութեան պատճառ դառնալ ինչպէս ի Պրուսա, ի Սերաստիա, ի Ղազարիա և ի Մարսուան, ի Վան, ի Մալաթիա, ի Սարս, և համարեա՝ թէ բոլոր տաճկաստանի վիճակները:

Այսպիսի մի քանի խառնակիչ լրտեսներ առաւելուած են այդ կողմերդ ալ ի Ռուսաստան:

\*\*\*

Գանք տեղւոյս Ազգ. լրագրաց:

Մեծագոյն մասը՝ որ ազգային շահուց և իրականց եկեղեցւոյ և սուրբ անտիրութեանց պաշտպան են և բերան հասարակութեան, էֆէնդիէն կողմնակի և անկողմնակի քանքերովը կհայածուին և կվնասուին ըստ նիւթականին՝ ինչպէս մի քանի ամիս առաջ պատահեցաւ:

Երբեմն բոլոր լրագիրք գրէթէ խաբուած էին և արձագանք, բայց այժմ արթնած և բոլորովին տարբեր ընթացք բռնած են Ազգ. գործոց և Ս. Խրիմեանի համար:

Սոցյա մէջէն դուրս պէտք է հանել Մասիսը, որ միմիայն շողորբութիւնն զիտէ, երբէք մի «կէն»-ն չունի, միշտ իւր անձին նիւթական օգուտ տուողին կառքը կը նստի, այսօրուան պաշտպանածը՝ վաղը զիտէ պախարակել — և հակադարձը — և այն ո՛չ թէ ճշմարտասիրութեամբ և արդարասիրութեամբ, նոյնպէս Մեղուն, նոյնպէս Եփրատը: Ասոնք հակազգային շահուց և իրականց պաշտպաններու գործիքներն և արձագանքներն են:

\*\*\*

Սուրբ Երուսաղեմի մեր ազգ. կալուածոց վերայ Լատինք և Յայեք միշտ բռնաբարութիւններ կգործեն:

Ս. Յակոբայ վերջին խնդիրը իսպառ չվերջացած՝ մի հին խնդիր ևս կյուզեն Լատինք:

Ահաւասիկ Փոռնիքն կօրինակեն:

Երուսաղեմայ մեր ազգային տաճարին մէջ Լատինաց պատարագելու կամ չպատարագելու խնդիրը դեռ վերջնական կերպիւ չուժուած, ուրիշ կամ հին խնդիր մի դարձեալ երևան ելած է:

Ասկէց չորս տարիի չափ յառաջ Բէթղէհէմի պրին վարագործները պրեցան, և հոն գտնուած մեր ազգային եօթը պատկերները աներեւոյթ եղան: Բէթղէհէմի պրը ըստ որում Հայոց Յունաց և միանգամայն Լատինացն է, այն ատեն երկը ազգաց մէջ մեծ խնդրոյ և յուզման պատճառ եղաւ այս դէպքը, և կայսերական կառավարութիւնը միջամտելով որոշեց որ պրած վարագործին անդ ուրիշ մին արքունի գանձէն շինուի, և մեր ազգային վանքը պատկերները դնելու արտօնութիւն ունենայ ինչպէս դարերէ հետէ ունէր:

Արդ՝ վարագործը շինուած և Երուսաղեմ դրուուած է կայսերական կառավարութեան կողմանէ, բայց դարձեալ վերջացած չէ խնդիրը. որովհետեւ Լատինք վարագործին վերայ Լատինական նշաններով գոցած են, իրր թէ բոլոր՝ պրը իւրեանց սեպհական եղած ըլլալ: Ահաւասիկ, ի խնդրոյ Ս. Պատրիարքին Երուսաղեմայ մեր ազգային Պատրիարքարանը կբողբէ և միանգամայն կպահանջէ որ ըստ վաղեմի սովորութեան պրին մէջ եօթը պատկեր ունենայ և ո՛չ վից, ինչպէս կպահանջեն Լատինք: Այս մտօք թաղարի մի առ Բ. Դուռն գրել որոշուած էր, բայց զրկուիլը չըսեցինք:

Մէկ կողմանէ մեր ազգային Պատրիարքարանը յիշեալ խնդրոյն համար այսպիսի բողբ մ'ըրած ատեն, կրնէք թէ միւս կողմանէ ալ Երուսաղեմայ Յունական Պատրիարքն պիտի բողբէ և խնդրէ կայսերական կառավարութեանէն, որ վանքը շինէ վարագործին իրեն ինկած մասը, որպէս զի Լատինք յապաղային դարձեալ խնդր յարուցանելու իրաւունք չունենան, պատճառելով թէ կայսերական գանձէն շնորհ մ'է Լատինաց համար, և միայն Լատինաց սեպհական է:

Ծաւ է լսել՝ եթէ որ քաղաքականութեան մաս չկայ, Դեր. Խրիմեան Պատրիարք անցեալները հեռագիր տուած էր ի Ս. Երուսաղեմ՝ թողուլ Լատինաց՝ որ Ս. Յակոբայ մէջ պատարագեն: Բայց չեմ կարծեր որ նորա հեռագիրը արձագանք գտնէ Ս. Երուսաղեմի Միաբանութեան աղջկ և մեր Եկեղեցւոյ իրաւունքը զոհուի օտարին:

Այս խնդիրը վերջացած համարելու է:

Առայժմ այսքան:

Ձեր խնայիչ Ժառանգ Հայկ . . .

1872 Սեպտ. 1

Երևան:



## Ի ՏԵՐ ՆՆՋՈՒՄՆ

ՊՕՂՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶՄԻՒՌՆԻՈՅ.

Պօլսոյ լրագիրք գուժեցին երբեմն Կ. Պօլսոյ Պատրիարք Գեորգի Պօղոս սրբազան Երեւակոսկոպոսի Զմիւռնոյ Եռաջնորդի ի Տէր ննջումն:

## Ըստ այսմ կգրէ Օրագիրը:

Պատրիարքարան քաջուած հեռագրէ մը կիմանալով թէ նախկին Պատրիարք Պօղոս Սրբազան վախճաներ է իւր խոր ծերութեան հասակին մէջ:

Պօղոս սրբազան երեւելի տաղանդի տէր մէկն էր, մանաւանդ եկեղեցական գործոց խիստ նախանձախնդիր, և ի՞նչ իւր Պատրիարքութենէն անկման օրեր ցաւալի դէպքեր պատահեցան՝ որ Պատրիարք իւր գահէն ովանայով իջած է, ուստի անցեալին ամենայն անյիշաչարութեամբ կը ցաւիւր որ եկեղեցական խնդրոց խիստ նախանձախնդիր Սրբազան մը կորսնցուց ազգը:

Սեպտ. 15:

## Մասինս ևս հեռեւեալը կգրէ:

Ամենապատիւ Տ. Պօղոս Սրբազան Երեւակոսկոպոսի վախճանման լուրն արդէն ծանօթ է մեր ընթերցողաց:

Հոգեկոյս Սրբազանն աշակերտ էր Պրոսպար և Նիկոմիդիոյ այն մեծանուն առաջնորդ Բարաբոզեան Պօղոս Սրբազանին՝ որ Արմաշու վանաց հիմնադիրն եղած է: Իւր մանկութեան պատմութիւնը մեզ անծանօթ, բայց եկեղեցական կեանքը ծանօթ է, և արդարութեան պարտք մի կը համարիմք խոստովանել թէ իւր սրբակրօն վարդապետին պէս անարատ և անսողիւտ էր ի վարս, հմուտ և նախանձաւոր կարգաց և աւանդութեանց եկեղեցւոյ, միով բանիւ կատարեալ Հայ եկեղեցական, որոյ նմանը դժբաղդաբար քիչ կը գտնուի այսօր մեր եկեղեցական դասուն մէջ:

Իւր պատրիարքութեան ժամանակ՝ մանաւանդ վերջերս՝ զգոհութիւնը ծագեցան իր դէմ, բայց որ պատրիարք կրցած է բամբասանքէ և զգո-

հոյթնէ ազատ մնալ, կամ մանաւանդ ընդ ովսանաներով չէ ի գահ հանուած և ետքն ալ ի խաչ հան զգաններով վար չէ առնուած, Պատրիարքութեան փափուկ և ծանր պաշտօնին ճակատագիրն է այս, որում Պօղոս սրբազան ալ ննձակայ եղաւ: Իրեւ պատրիարք կրնար իւր նախորդաց պէս մանր և շատ անգամ ակամայ թերութիւններ ունենալ, բայց իրեւ եկեղեցական և իրեւ եպիսկոպոս՝ իւր աստիճանակիցներուն շատերը կը դերազանցէր իւր հմտութեամբն և կրօնաւորական բարեմասնութեամբը:

Ուստի կրնամք ցաւելով ըսել թէ Հայաստանայց եկեղեցին ընտիր եկեղեցականէ մի զրկուեցաւ:

Սեպտ. 14:

## ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ.

Ե. յօտ (սեպտ. 30) արժանավարելու հանդիսիւ կատարուեցաւ Վ. Ի. Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գեորգեայ Գ. ի անուան Տօնախմբութիւնը:

Մաղթանքի ժամանակ Վ. Թանէս Վարդապետ և Զօհրայ Ուրարեակիրը ծառեր կտրդացին, ինչպէս ի Սեղանատան ևս մի ուղեւոր ընթերցաւ Մայր Եթողոյս ուսումնարանի աշակերտ դպիր Երշակ Պալասանեան:

Յերեկոյն ճրագավառութիւն եղաւ:

Յաջորդ ամսագրոյ մէջ արժան կը համարիմք հրատարակել երեք ծառերը:

Կ Ա Ն Թ Ե Ղ.

Տփլիսեցի Մեծ. Գեորգ Լսայեան Երիտղմեանց մի մեծ ազակեայ ջահաճեւ Կանթեղ ընծայեց Ս. Տաճարիս Լժմիածնի:

Շնորհակալութիւն կ'այսնենք յիշեալ անձին: